



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

9

ԳԼՈՒԽ ԼԱ ՎԱՍՆ ԳԱԲԱՌԱՅ ԵՒ ԳԵՂԻՅ ԵՒ ՆՈՅՈՒՆՅ ԻՐԱՅՆ

Ի յամենայն երկիր, ուր ոսկի ելանէ, թագաւորաց է իրաւունք, իսկ արծաթն՝ թագուիւեաց: Իսկ եթէ յերկիր իշխանաց գտցի ոսկի կամ արծաթ, թէ կամք իցէ թագաւորին՝ մասն տացէ նմա, ապա թէ ոչ՝ ի կամս իւր մնասցէ: Պղինձ, եւ երկաթ, եւ կլայեկ եւ այլք յայսպիսեաց՝ իշխանաց լիցի մեծամեծ, պարգեւօք ի թագաւորաց. նմանապէս եւ աղ, եւ բորակ, եւ նաւթ, եւ կուպր եւ այլ ինչ այսպիսի՝ իշխանաց լիցի: Իսկ ակն եւ մարգարիտ արքունեաց է, եւ այլ ինչ՝ ի պատուաւորաց: Իսկ ձիւթ, եւ խունկ, եւ դեղին խունկ, եւ մագտաքէ, եւ գխտոր, դարիկոն եւ սակամունի եւ այլք յայսպիսեաց, որք վաճառին եւ շահին, եւ տասանորդեացն իշխանք: Իսկ պտուղք ամենայն, գտեալ ի մայրիս, շինականանցն եղիցի յիրաքանչիւր սահմանս: Իրաւացի դատաստանաւ տասանորդել օտարացն ի կթել պտղոցն, վասն զի գան եւ կթեն, եւ վարձս առնուն ի տասնէն զմինն, եւ գեղջին կամօք լիցի, յորում սինօտ պտուղն էր: Այսպէս եւ՝ շինոյ փայտ, եւ խոտ յարօտ եւ ի հնձել, եւ հող ի վարել: Այլ եւ գետք, ուստի ակն ելանէ՝ նոցա է, եւ ոչ առ ուր հասանեն: Որսք վայրիք, ով որսայ, նորա լիցի: Եւ թէ այլք յայլոց սինօտ որսան, յամէն տասնէ զմէկն գեղջին տիրոջն տան: Եւ թէ որ ի մայրիս որս առնէ, յամէն տասնէ զմինն յայն տայ, յոյր սահմանքն լիցի: Նոյնպէս եւ ծովու որսք տասանորդեացն՝ ում եւ իցեն սահմանքն:

ԳԼՈՒԽ ԼԲ ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳԻՒՏԻՅ ԳԱՆՁԻ



Եթե շինե՛ք տուն, կամ վարե՛ք արտ, կամ փորե՛ք հող եւ գտանե՛ք գանձ կարասով կամ այլ փոքր ամանով, այն թագաւորաց է իրաւունք, եւ ի տասնէն մինն գտողին է, երբ իւրն չլինի տեղիքն, ուր գանձն գտաւ. ապա թէ յիւր տունն կամ յիւր արտն եւ յայգին գտանէ, ի հնգէն մինն գտողին է, վասն զի իւրն է տեղն: Ապա թէ որ գտաւ, իւր ազգին եւ իւր հարանցն լեալ էր գանձն, եւ հաստատէ վկայիք, նմա լիցի, որ եգիտն, եւ ի տասնէն մինն արքային բաժին է: Եւ թէ ի վարձկանաց իցէ գտողն ոչ կարծեմ իրաւացի տասանորդել, այլ մասն ինչ:

ԳԼՈՒԽ ԼԳ ՎԱՍՆ ՈՐՔ ԿՌՈՒԻՆ ԵՒ ԶԻՐԵՐԱՅ ՄՈՒՐՈՒՔ ՓԵՏԵՆ

Եթե՛ կռուին արք երկու, եւ մինն մալազ լինի, եւ մինն՝ կատարեալ, եւ ձգէ մալագն եւ փետէ գնորուք կատարելոյն, դատաստան լիցի, որ կտրեն գմալագին մագն երկու տարապայ, քանզի գկատարելոյն մուրութն քարշեաց եւ եհան, եւ եւթն փայտ ի վերայ թիկանցն տան: Ապա թէ յաւազ մարդոյն եղեւ պատճառ կռուոյն, կէս վրիժուցն խնդրեսցի ի փոքերն, զոր ի վերոյ գրեցաք, զի մի՛ այլք այսպիսի իրս գործեսցեն:

ԳԼՈՒԽ ԼԴ ՎԱՍՆ ՀՈՐՈՅ ՍԵՐՄԱՆՑ

Եթե՛ բանայ ոք հոր ցորենոյ կամ այլ սերմանց, յիւրոց եւ թէ յօտարաց ի ներքս՝ ի հորն իջուցանէ, թէ մեռանի՝ արիւն նորա ի ձեռաց նորա խնդրեսցի, եւ թէ հիւանդանայ գղեղագինն եւ գլխափանդումն վճարեսցէ, զի պարտ էր զգուշանալ մինչեւ հորին հոտն ելանէր եւ ապա մարդ ի ներսն էր կախեալ: Ապա թէ վարձեաց գմարդն եւ յառաջն ասաց, թէ խիստ է հորոյն հոտն, եւ նա էջ ի ներս, արիւն նորա ի գլուխն իւր:

ԳԼՈՒԽ ԼԵ ՎԱՍՆ ՎՆԱՍԵԼՈՅ ՇԻՆԱԿԱՆԱՅ Ի ՏԵՐԱՆՑ

Իշխանք եւ այլք, եթե՛ յաւելի դատելն զպառիկոսս, որ ընդ ձեռամբ իւրեանց իցեն, եւ հանդիպի մեռանել, արեան զինք առցեն ի նմանէ եւ տացեն յորդիս կամ յազգայինս. եւ թէ ձեռն կոտրեն կամ ոտն, կամ ատամն խլեն կամ ակն, զգինս տան. եւ թէ ձեռն կոտրեն կամ ոտն, կամ ատամն խլեն կամ ակն, զգինս տան. եւ թէ բժշկօք լիցի՝ զվարձս բժշկին եւ գլխափանդումն վճարէ:

ԳԼՈՒԽ ԼԶ ՎԱՍՆ ՈՐՔ ՍՈՒՏ ՔԱՀԱՆԱՅՔ ԼԻՆԻՆ ԵՒ ԿԱՄ ՔԱՀԱՆԱՅՔ ԱՆԻՐԱԿ ԳՈՐԾ ԳՈՐԾԵՆ

Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ. եթէ մի՛ որ յանդգնեցի ի մարդկանէ, որոյ չիցէ զօծումն քահանայութեան ընկալեալ, եւ արասցէ իրս ինչ իշխանութեամբ իբրեւ զքահանայ, եւ կամ քահանայ աշառանօք եւ ակնատութեամբ գործիցէ ինչ առանց օրինաց եւ իրաւանց, այլ արդարութեամբ եւ անակնատութեամբ: Եւ զայս ահա զառաքելական կանոնի զհրամանն այսպէս դատել պարտին առաջնորդք, զի զշար սովորութիւն լուծցեն, զոր աշխարհականք առնեն արք եւ կանայք՝ վերակացուք լինին եկեղեցոյ Աստուծոյ եւ զմուտս եւ զպտղիս ուտեն: Արդ, պարտ է ասել, զի լոնսցեն յայնպիսի սովորութեանց: Նոյնն եւ ընդ քահանայս հրամայէ եպիսկոպոսն, որք անկարգք եւ անուղղայք իցեն, կերողք եւ արբեցողք, զի մի՛ այնպէս վարեսցին, այլ սրբութեամբ եւ առաքինասէր վարուք: Եւ որք ոչ կայցեն ըստ խրատու օրինացն Քրիստոսի, լոնցուցէ ի կարգէն քահանայութեան:

ԳԼՈՒԽ ԼԷ ՎԱՍՆ ՈՐՔ ԶՔԱՀԱՆԱՅՍ ԱՆԱՐԳԵՆ

Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, թէ մի՛ որ անարգեսցէ եւ անգոսնեսցէ եւ արհամարհանօք կալցի զքահանայս, թէ եւ կարի որ յանարգաց իցէ. զիտասցէ, զի որ անարգէ զայնպիսին՝ զԱստուած անարգէ, զի Աստուծոյ սպասաւոր է ի բարիս, եւ համարս տայցեն ընդ հոգոց ձերոց. ո՞չ գրեալ է՝ զիշխան ժողովրդեան քոյ մի՛ բամբասիցես: Եւ զայս դատաստան եւ որ նախ քան զայս երբեմն թէ եւ սակաւ ինչ գրեցաք, այլ երկրորդել յօժարեցաք այժմ յառաքելական կանոնաց՝ ցուցանելոյ աղագաւ զմեծութիւնն պատժոցն անարգողաց քահանայից, զի դատել զոյգ է զնոսա ընդ աստուածանարգս՝ իրաւացի դատաստանաւ, ըստ այնմ՝ որ զձեզ անարգէ, զիս անարգէ: Եւ որ չիցեն՝ եւ այն իսկ ըստ արժանոյն ցուցաւ:

ԳԼՈՒԽ ԼԸ ՎԱՍՆ ԴԱՏԱԻՈՐԱՅ

Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, եթէ որք են յաստիճան դատաւորութեան եւ իշխան են առնել դատաստան, եթէ թիւրէ եւ ընդ երեսաց

առնէ, եւ պարտաւորեցէ զարդարն եւ արդարացուցէ զպարտաւորն, մի՛ եւս կացցէ ի կարգի դատաւորութեան եւ պատուիասեալ կշտամբեցի, զի ոչ իմացաւ զգրեալսն աստուածային ձեռամբն յօրէնսն Մովսիսի, եթէ մի՛ խտորեցուցես զիրաւունս ի դատաստանի եւ կաշառ ի վերայ իրաւանց մի՛ առնուցու: Ի դատաստանէ դատաւորաց, ի կանոնական հրամանացս ուսաք, զի որք եկեղեցական դատաւորք են՝ մի՛ զոմն քան զոմն պատուեցեն ի դատաստանի, այլ թէ գայցէ իշխան ի դատաստան, եւ աղքատ ոմն՝ զկնի, կանգնեցնեն զերկոքեանն ի միասին եւ օրինօքն Աստուծոյ դատ արացեն ի միջի նոցա, այլ արծաթ մի՛ առցեն եւ թիրեցեն զդատաստանս ճշմարիտս, քանզի Աստուած վրէժխնդիր է դատաւորաց վասն օրինացն իւրոց:

ԳԼՈՒԽ ԼԹ ՎԱՍՆ ԸՆԶԻՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Եպիսկոպոս, որ գայ նոր յաթոռ եպիսկոպոսութեան նստի ի քաղաքի, գրով եւ թղթով յայտնեցէ զինչսն, զոր ունի: Նոյնպէս եւ զեկեղեցոյն գրով առցէ յինքն, զի ի մեռանելն իւրում իշխան լիցի ի վերայ ընչից իւրոց միայն եւ ում կամեցի տացէ զինչսն իւր, եւ զեկեղեցոյն ոչ կարէ: Եւ մի պատճառանօք եկեղեցական իրացն, անկանել յիւրմէն եպիսկոպոսին, թերեւս կին եւ մանկունս ստացեալ ունիցի, կամ ազգական, կամ ծառայս: Զի իրաւացի է Աստուծոյ եւ մարդկան, զի մի՛ եկեղեցոյն վնաս ինչ կրել անգիտութեամբ եպիսկոպոսին իրաց, եւ մի՛ զեպիսկոպոսն եւ զազգականսն իւր պատճառանօք եկեղեցոյն յամենայնէ զերծանել, եւ կամ յիրս ինչ անկանել նորա ազգականացն եւ մահու նորա լինել պատճառք հայիոյութեան: Ահաւասիկ յանդիմանին բամբասողք զեկեղեցի, թէ դատաստան ոչ ունի, զի այս իրաւունք դատաստանաց նոցունց իսկ է առաքելոցն, զի եւ զդատաւորս հրամայեն դատել զանիրաւս, եւ զեպիսկոպոսաց եւ զեկեղեցոյ զընչից ցուցին զիրաւունս: Յորոց յայտ է, զի ոչ միայն աւանդութեամբ վարէին դատաստանաւ, այլ եւ չափաւոր գրեցելովքն, իբր պատկերաւ զբաւանդակ ուսեալ վարէին: Ըստ որում եւ մեզ յոյժ ի դէպ է վարիլ եւ մի՛ այլազգ ինչ:

ԳԼՈՒԽ Խ ՎԱՍՆ ԻՇԽԵԼՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՅ

Հրամայեմք եպիսկոպոսին իշխանութիւն ունել գեկեղեցական իրաց, քանզի եթէ գպատուական հոգիս մարդկան նմա հաւատալի է, առաւել եւս իրաւացի է զիրս կատարել, որպէս զի ըստ իշխանութեան նորա խնամ ունել կարօտելոց, եւ ի ձեռն երիցանց եւ սարկաւագաց ունել խնամակալութիւն եկեղեցոյն Աստուծոյ եւ ամենայն զգուշութեամբ առնել. եւ ինքեանք իսկ, եթէ կարօտ ինչ իցեն, եւ յօտարաց եղբարց ի պէտս, զի մի՛ ինչ իրօք նոցա պակասութիւն լիցի, վասն զի օրէնքն Աստուծոյ հրամայեն՝ որ սեղանոյն պաշտօնեայքն են, ի սեղանոյ անտի կերակրել. ըստ որում եւ ոչ զինուորն իւրովք թոշակօքն զգէնս պատերազմացն բերէ: Եւ ասացաք վերագոյնն՝ եկեղեցոյն իրաց յայտնի լինել եւ եպիսկոպոսին, եւ թէպէտ յաւել գպատճառսն, զի մի՛ կարծիցի ոչ իշխել եպիսկոպոսին իրաց եկեղեցոյն, եցոյց զիշխանութիւնն, սակայն եւ զսահմանն յայտ արար, զի մի՛ վայրապար ինչ գործիցէ, զոր եւ իրաւացի կարծելի է դատաստան եկեղեցոյ:

ԳԼՈՒԽ ԽԱ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԶՊԷՏՍ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՈՉ ՏԱՅԵՆ

Եթէ որ եպիսկոպոս կամ երէց, ի ժառանգաւորացն, որ կարօտ իցեն, եւ ոչ տացէ նոցա զպէտս, որոշեսցի իբր զսպանող եղբօր իւրոյ: Լուիցեն զկանոնական դատաստանս եւ հարք միաբանաց, զի զանգութ բարսն ընդ սպանողսն կարգէ, եւ այսմ դատաստանի բազում կան վկայք:

ԳԼՈՒԽ ԽԲ ՎԱՍՆ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ Ի ԿՌՈՒԻ ՀԱՐԿԱՆՈՂԱՅ

Եթէ որ ժառանգաւոր ի կռուի գոք հարկանէ, եւ ի միոջէ հարուածոյն մեռցի, լուծցի վասն յանդգնութեան իւրոյ, իսկ եթէ ժողովրդական որ իցէ՝ որոշեսցի: Եւ այս կանոնական հրաման ըստ Օրինացն է. զի թէ ոչ մեռցի, այլ ի մահիճս դնիցի եւ յառնիցէ եւ շրջեսցի, անպարտ լիցի, որ եհարն: Սահման եղ, զի թէ զկնի այնր մեռցի. նոյն եւ այս է ի միոջէ հարուածոյ: Ապա թէ ոչ մեռցի ի միոջէ հարուածոյ, ոչ լուծցի, այլ դատաստան լիցի յողորմութիւն եւ յապաշխարութիւն, եթէ ժառանգաւոր է եւ եթէ աշխարհական:

ԳԼՈՒԽ ԽԳ ՎԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԵՌՆԱԴՐԵԼՈՅ

Եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ երկրորդ ձեռնադրութիւն ընկալեալ յումեքէ, լուծցի նա, եւ՝ որ ձեռնադրեացն, բայց եթէ ցուցցէ ի թերահաւատից ունել նմա զձեռնադրութիւնն, քանզի յայսպիսեացս զմկրտեալն եւ զձեռնադրեալն ոչ հաւատացեալս եւ ոչ ժառանգաւորս հնար է լինել: Յայտնի է ընդ դատաստան կանոնիս, զի որ ձեռնադրէ ոչ զլուծելոցն ի հայրապետէ կամ ի ժողովոյ, այլ որ տակաւին յաստիճանի իցէ, այնպիսին ախտացեալ ամբարտաւանութեամբ գործէ, նմանապէս եւ՝ որ ձեռնադրեցան, ուստի իրաւացոյց լուծանել զնոսա իրաւամբք: Եւ ի թերահաւատից, այսինքն՝ ի հերձուածողաց, զմկրտեալսն եւ զձեռնադրեալսն հրամայէ երկրորդել:

ԳԼՈՒԽ ԽԴ ՎԱՍՆ ԳՈՂՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Եթէ որ ժառանգաւոր կամ ի ժողովրդականանց առցէ յեկեղեցոյն մոմեղէն կամ ձէթ, որոշեսցի եւ հնազապատիկ տուժեսցի, որով էառն անօթով ոսկեղինաւ կամ արծաթեղինաւ սրբեցելով: Եւ մի՛ որ ի պէտս գողացեալ, զի օրինազանցութիւն է. ապա թէ որ ընթոնեսցի՝ պատուիասեալ որոշեսցի: